

## ԿԱՐԾԻՔ

Հայկ Հարազատի Մարտիրոսյանի 2.01.02 «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն, բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Լուիկի նոր ողկուզավոր հիբրիդների աճի և զարգացման առանձնահատկությունները Հայաստանի ջերմամերձային մշակության դեպքում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ջերմատնային արտադրանքի շարքում հատկապես կարևորվում է լուիկի բարձր որակական և քանակական հատկանիշներով օժտված սորտային կազմը դրա պարբերական թարմացումը այդ թվում արդյունավետ հիբրիդների ներդրմամբ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում լուիկի ինտրոդուցված և տեղական ողկուզավոր ինդետերմինանտ հիբրիդները, դրանց ագրոկենսաբանական առանձնահատկությունները և արտադրության մեջ լավագույնների ներդրման հեռանկարները: Այս տեսակետից Հ.Հ.Մարտիրոսյանի ատենախոսությունը ներկայացնում է որոշակի գիտական և գործնական արժեք:

Ատենախոսը նպատակ է ունեցել ուսումնասիրել, վերլուծել և գնահատել լուիկի նոր ողկուզավոր հիբրիդների ագրոկենսաբանական առանձնահատկությունները, կայունությունը հիվանդությունների նկատմամբ, ինչպես նաև տնտեսական արդյունավետությունը: Աշխատանքը շարադրված է 103 համակարգչային էջի վրա: Բաղկացած է ներածությունից, 6 գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, հավելվածներից, պարունակում է 16 աղյուսակ, 14 գծապատկեր, 7 նկար: Օգտագործված գրականության ցանկը ներառում է 141 անուն:

Ներածությունում տեղեկատվություն է տրվում հանրապետության ջերմատնային տնտեսությունների արտադրական հզորությունների ավելացման և մրցունակության մակարդակի բարձրացման մասին, հիմնավորվում է ողկուզավոր լուիկի նոր հիբրիդների մշակության, բերքի կառուցվածքային տարրերի, գրունտային և թաղանթապատ հիդրոպոնիկ ջերմատներում մշակության արդյունավետությունը:

**Առաջին գլուխը**, որը ատենախոսության գրական ակնարկն է, շարադրված է հաջող, գրականության տվյալների հիման վրա ծավալուն տեղեկատվություն է տրվում լուիկի բուսաբանական ու ֆիզիոլոգիական առանձնահատկությունների վերաբերյալ: Նշվում է խիտ սաղարթի պայմաններում բույսի ստորին մակարդակի տերևի

թիթեղներում ֆոտոսինթեզի ինտենսիվության նվազման ու բերքատվության միջև կորելացիոն կապը: Շարադրված է նաև ողկուզավոր լուլիկի առանձնահատուկ գենոմային կառուցվածքի փաստը: Օրինակ՝ լուլիկի գենոմը ներառում է *rin* գենը, *nor* և *nor A*-ն հետերոզիգոտ վիճակում: Սրա շնորհիվ ողկուզի հիմքում ընկած պտուղները չեն հասունանում և չեն թափվում մինչև վերին պտուղների հասունանալը: Ժամանակակից հետազոտությունների հիման վրա ատենախոսի կողմից ներկայացված են փաստեր ողկուզավոր լուլիկի փոքրածավալ հիդրոպոնիկ պայմաններում մշակության վերաբերյալ:

Այսպիսով, Հ.Մարտիրոսյանը շնորհակալ աշխատանք է կատարել ջերմատնային ողկուզավոր լուլիկին վերաբերող գրականությունը ի մի բերելու և դրանից բխող գիտական և գործնական կարևոր եզրակացություններ անելու գործում:

Ատենախոսության **երկրորդ գլխում** ներկայացված են հետազոտությունների կատարման պայմանները և մեթոդները:

Հետազոտությունները իրականացվել են 2021-2023թթ. օբյեկտ է հանդիսացել ողկուզավոր լուլիկի 5 F<sub>1</sub> հիբրիդ: Ուսումնասիրվել են ձևաբանական հատկանիշները՝ թփի ձևը, ցողունի երկարությունը, միջհանգույցների և միջողկույզների երկարությունը, պտղի ձևը, գույնը, պտուղների որակական հատկանիշները: Իրականացվել են նաև ֆենոլոգիական դիտարկումներ, հիվանդությունների ախտորոշում ՊՇՌ մեթոդով բնական վարակի ֆոնի վրա: Նույնականացվել են սնկային՝ *Phytophthora infestans*, *Fusarium oxysporum* և բակտերիալ *Clavibacter michiganensis* հարուցիչները:

Հետազոտությունների ընթացքում կիրառված մեթոդները ժամանակակից են, ստացված տվյալները՝ արժանահավատ: Ուսումնասիրությունների արդյունքները շարադրված են ատենախոսության հաջորդ գլուխներում, որտեղ հեղինակը կանգ է առնում և մանրամասն վերլուծում մի շարք ուշագրավ փաստեր:

**Երրորդ գլխում** ատենախոսը մանրամասն ուսումնասիրել է լուլիկի ողկուզավոր հիբրիդների կենսաձևաբանական առանձնահատկությունները և տվել է դրանց ֆիտոպաթոլոգիական գնահատումը:

Ձևաբանական կարևոր հատկանիշներով որպես լավագույններ ատենախոսի կողմից առանձնացվել են՝ ներմուծված Climbo F1 և տեղական RM-4 (Սյունե) հիբրիդները: Պարզվել է, որ հիբրիդները միմյանցից տարբերվել են առանձին ֆենոլոգիական փուլերի անցման տևողությամբ: Վաղահասությամբ առանձնացվել են ներմուծված Adventure F1, Climbo F1 և տեղական RM-4(Սյունե) հիբրիդները:

Կատարված ֆիտոպաթոլոգիական ուսումնասիրություններից պարզվել է, որ տեղական RM-4(Սյունե) հիբրիդը համեմատաբար բարձր դիմացկունություն է ցուցաբերել ֆուզարիոզային թառանման, ֆիտոֆտորոզ և բակտերիալ քաղցկեղ հիվանդությունների նկատմամբ:

**Չորրորդ գլխում** ուսումնասիրվել են լոլիկի հետազոտվող ողկուզավոր հիբրիդների բերքատվության առաձնահատկությունները և պտուղների որակական հատկանիշները: Արդյունքում գարնանային շրջապտույտում բարձր վաղ բերքով առանձնացվել են Climbo F1 և RM-4(Սյունե) հիբրիդները, աշնանային շրջապտույտում՝ Santiana F1 և է Adventure F1 հիբրիդները, իսկ ընդհանուր բերքի ցուցանիշով հետազոտվող բոլոր հիբրիդները գերազանցել են ստուգիչին:

Հետազոտությունների արդյունքում լոլիկի ուսումնասիրվող հիբրիդներից պտուղների որակական ցուցանիշներով և լիկոպինի պարունակությամբ՝ անկախ մշակության շրջապտույտից, առանձնացվել են Adventure F1, Climbo F1 և տեղական RM-4 (Սյունե) հիբրիդները:

**Հինգերորդ գլուխը** նվիրված է լոլիկի հետազոտվող ողկուզավոր հիբրիդների աճեցման տնտեսական արդյունավետությանը:

Արձանագրվել է, որ լոլիկի հետազոտվող ողկուզավոր հիբրիդներից առավել բարձր տնտեսական արդյունավետություն են ապահովել տեղական RM-4 (Սյունե) և ներմուծված՝ Adventure F1, Climbo F1 հիբրիդները, որոնք իրենց միջին տվյալներով 1000 մ<sup>2</sup>-ից ստացվող լրացուցիչ զուտ եկամուտի ցուցանիշներով գերազանցել են Prodezo F1 ստուգիչին:

Ամփոփելով կատարած աշխատանքների արդյունքները՝ **վեցերորդ գլխում** ատենախոսը իրականացրել է լոլիկի հետազոտվող ողկուզավոր հիբրիդների արտադրական փորձարկում Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի «Արմֆուդ» ՍՊԸ թաղանթապատ հիդրոպոնիկ արտադրական ջերմատանը, որտեղ նշված հիբրիդները ուսումնասիրվել են փոխանցվող շրջապտույտում՝ 2022-2023 թթ. ընթացքում:

Արտադրական փորձերի արդյունքներից պարզվել է, որ հետազոտվող հիբրիդների բույսերի աճի, զարգացման և բերքատվության ցուցանիշները ավելի բարձր են եղել քան սովորական գրունտային ջերմատանը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ըստ հետազոտվող հիբրիդների, հիմնական ցուցանիշների փոփոխության օրինաչափությունը պահպանվել է:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ գրախոսվող աշխատանքը կատարված է որակով, զգացվում են ատենախոսի գիտական պրպտումները, փորձերը պլանավորված են ճիշտ և դրված խնամքով, արդյունքները քննարկված են տրամաբանորեն: Գրական ակնարկում և փորձերի շարադրման ընթացքում ցիտված գրականության համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հ.Մարտիրոսյանը տեսականորեն պատրաստված մասնագետ է և օժտված է փորձարարական հմտություններով:

Ատենախոսության մեջ տեղ են գտել նաև որոշ թերություններ:

1. Տեքստում հանդիպում են վրիպակներ էջ 6,10,25,73,75,82,87: Սեղմագրում ամփոփագրերի վերնագրերում կան անհամապատասխանություններ:

2. Էջ 33-ի աղյուսակ 3.1-ում ներկայացված տվյալների մաթեմատիկական մշակման վերաբերյալ որևէ տեղ չի նշվում փորձի սխալի տոկոսը:

3. Էջ 66 աղյուսակ 4.3-ի գլխագրում լուրիկի որակական ցուցանիշները արտահայտված են տոկոսներով, սակայն ստորև բերված են տվյալներ  $\pm$  միջակայքերով:

4. Գլուխ 6-ում նշված է, որ փորձամարզի մակերեսը թաղանթապատ հիդրոպոնիկ ջերմատանը կազմել է  $80\text{մ}^2$  և փորձերը դրվել են 2 կրկնողությամբ, մինչդեռ հետազոտության օբյեկտը և մեթոդները ենթազլխում նշված է 3 կրկնողություն:

5. Առանց հղման և մեկնաբանության աղյուսակ 3.4-ը Լուրիկի հետազոտվող ողկուզավոր հիբրիդների ֆիտոպաթոլոգիական գնահատականը (2023թ.) կրկնվում է երկու անգամ էջ 46 և 49, սակայն այդ աղյուսակի հղումն ու վերլուծությունը բերված է էջ 54-ում:

6. Աշխատանքում զետեղված նկարները էջ 36-45 բարձր որակի են, սակայն կարիք չկա դրանցով ծանրաբեռնել տեքստը: Փոխարենը դրանք պետք է տեղափոխել հավելված:

7. Եզրակացություններում ատենախոսը կրկին անգամ քննարկում է ստացված արդյունքները, որի հետևանքով եզրակացությունների ծավալը և թիվը ավելացել է և կազմել 16:

8. Տեքստում տրվում են հղումներ, սակայն նշված հեղինակները բացակայում են օգտագործված գրականության ցանկում: Օրինակ՝ էջ 27 Դոսպեխով, 1985; Պետերբուրգսկի, 1968:


Նշված բացթողումները բնավ չեն նսեմացնում Հ.Մարտիրոսյանի ներկայացված ատենախոսությունը, որն իր արդիականությամբ, նորույթով և գործնական նշանակությամբ ժամանակակից աշխատանք է:

Հրատարակված 3 գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսությանը:

Ելնելով վերը նշվածից գտնում ենք, որ Հայկ Հարազատի Մարտիրոսյանի ատենախոսությունը ավարտուն աշխատանք է, որը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է 2.01.02 «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն, բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,  
ՀՀ ԷՆ Երկրագործության գիտական կենտրոնի  
գլխավոր տնօրեն, կենս.գիտ.դոկտոր՝

**Ռ.Ռ.Սադոյանի ստորագրությունը հաստատում է**  
Երկրագործության գիտական կենտրոնի գիտական  
քարտուղար, գյուղ.գիտ. թեկնածու՝



Ռ.Ռ.Սադոյան

Լ.Գ.Մաթևոսյան

18.07.2024թ.